

ՍՈՒՐԻՈՅ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻՆ ՀԱՅ ԵՐԵՍՓՈԽԱՆՆԵՐԸ (Ակնարկ)

Նորա Արիսեան
noraarissiandeputy@gmail.com

ՄՈՒՏՔ

Սուրիահայ պատմագրութեան մէջ, ընդհանրապէս հայոց մասնակցութիւնը Սուրիոյ խորհրդարանական կեանքին եւ անոր պատմութիւնը բովանդակալից կերպով չեն լուսաբանուած: Թէ՛ հայագիտութիւնը, թէ՛ Միջին Արեւելքի եւ ընդհանրապէս հայկական մամուլը շատ քիչ անդրադարձած են սուրիահայ երեսփոխաններուն:

Սոյն աշխատութիւնը կը միտի համառօտակի ծանօթացնել 1928-2011 շրջանի տարբեր հանգրուաններուն պաշտօնավարած սուրիահայ 21 երեսփոխաններու ծաւալած գործունէութիւնը խորհրդարանական կեանքէն ներս¹:

1920ականներուն հիմնուեցաւ Սուրիոյ խորհրդարանը՝ «Հիմնադիր Խորհուրդ» անունով²: Անոր պարտականութիւնն էր մշակել երկրին սահմանադրութիւնը: Սահմանադրութեան ծնունդէն ետք, 10 եւ 24 Ապրիլ 1928ին տեղի կ'ունենան խորհրդարանական ընտրութիւններ, որոնց յաջողութիւն կ'արձանագրեն Ազգային Միասնութիւնը եւ այլ ազգայնական թեկնածուներ:

«Հիմնադիր Խորհուրդ»ին մաս կը կազմէին չորս հայ երեսփոխաններ.- Հալէպէն՝ Նիկոլա Ճանճի (Ճանճիկեան)³, Ֆաթհալլա Ասիուն⁴ (փոխնախագահ) եւ Միհրան Բիւզանդեան⁵, իսկ Ալեքսանտրէթէն՝ Մովսէս Տէր Գալուստեան⁶:

9 Յունիս 1928ին տեղի կ'ունենայ խորհրդարանի անդրանիկ նիստը, զոր կը նախագահէ ժողովականներու երիցագոյն անդամ Մոհամմէտ Ատանալին: Իրեն կ'աջակցին կրտսերագոյն անդամներ՝ Սաիտ ալ Ղազին եւ Ճանճին:

Հիմնադիր Խորհուրդի այս անդրանիկ նիստին կ'ընտրուի նաեւ խորհրդարանին դիւանը, հետեւեալ կազմով.- Հաշմ ալ Աթասի (նախագահ), Ֆաուզի ալ Ղազի (43 ծայն) եւ Ֆաթհալլա Ասիուն (37 ծայն) (փոխնախագահներ):

Սոյն այս նիստին, խորհրդարանի դիտորդներ կ'ընտրուին Սաստալլա ալ Ժապրին (57 ծայն), Ճանճին (52 ծայն) եւ Ֆախրի ալ Պարուտին (49 ծայն): 67 անդամներէ բաղկացած այս խորհուրդին զլխաւոր յառաջադրանքը կ'ըլլայ Սուրիոյ սահմանադրութիւնը մշակող Սահմանադիր Յանձնաժողովի մը յառաջացումը:

27 անդամներէ բաղկացած «Սահմանադիր Յանձնաժողով»ը կ'ընտրուի Իպրահիմ Հանանոյի նախագահութեամբ: Յանձնաժողովին

մաս կը կազմեն հայ երեսփոխաններ՝ Տէր Գալուստեան եւ Բիւզանդեան⁷: Վերջինս անդամ կ'ընտրուի 11 անդամներէ բաղկացած քուէախոյզ յանձնաժողովին եւս:

Այդ նիստին, ծայր կ'առնէ խորհրդարանի երդման բանաձեւի քննարկումը, ուր հայ երեսփոխաններ՝ Ճանճի եւ Բիւզանդեան, կարծիք կը յայտնեն բնագրի փոփոխութեան եւ բանաձեւին շուրջ:

13րդ նիստին, 7 Օգոստոս 1928ին, տեղի կ'ունենայ սահմանադրութեան նախագիծի տաք քննարկումը, մանաւանդ որ Սուրիան բաժնուած էր ինքնկառավարուող աշխարհագրական շրջաններու եւ պայքար կը մղուէր անջատողականութեան դէմ ու կը վճռուէր Սուրիոյ միասնակա՞ն թէ՞ դաշնակցային պետութեան կարգավիճակը⁸: Այլոց շարքին ելոյթ կ'ունենայ նաեւ Ճանճի, որ իրաւաբա-նական տեսակէտեր պարզելէ ետք, կ'անդրադառնայ նախագահի իրաւասութիւններուն ու ժամկէտին, գործադիր մարմնի իրաւասութիւններուն եւ կրօնական փոքրամասնութիւններու հարցին:

Միւս կողմէ, Ալեքսանտրէթի երեսփոխանները իրենց ելոյթներով համաձայն կը գտնուին Սուրիոյ միասնականութեան, պայմանաւ որ Ալեքսանտրէթը պահպանէ իր իրաւասութիւնները:

Սուրիոյ 1932ի խորհրդարանին մաս կը կազմեն չորս հայ երեսփոխաններ՝ Տէր Գալուստեան (կ'ընտրուի դիտորդ, ակելի ուշ՝ Ներքին Հարցերու Յանձնաժողովի անդամ), Ճանճի, Հանրի Հընտիէ⁹ եւ Հրաչ Փափազեան¹⁰ (կ'ընտրուի Գիւղատնտեսական Յանձնաժողովի, իսկ երկրորդ նստաշրջանի 4րդ նիստին՝ 16 Մայիս 1933ին, Արդարադատութեան Յանձնաժողովի անդամ): 29 Հոկտ. 1932ի նիստին, փոխնախագահները կը փոխարինուին Հանրի Հընտիէով եւ Ֆարէս ալ Ջըղպիով:

1937ի Սուրիոյ խորհրդարանին մաս կը կազմէին հինգ հայ երեսփոխաններ՝ Ճանճի, Ասիուն, Հրանդ Սիլահեան¹¹, Պետրոս Միլլէթպաշեան¹² եւ Տէր Գալուստեան:

Այս խորհրդարանի երկրորդ նստաշրջանի 20 Հոկտեմբեր 1937ի երկրորդ նիստին, Սիլահեան մեծամասնութեամբ կ'ընտրուի Ազգային Տնտեսութեան Յանձնաժողովի անդամ, իսկ Տէր Գալուստեան եւ Միլլէթպաշեան՝ Արդարադատութեան Յանձնաժողովի անդամներ:

Միլլէթպաշեան աշխուժ գործունէութիւն կը ծաւալէ խորհրդա-րանին մէջ: 1937ին ընթացող նիստերուն ատենագրութեանց մէջ իյայտ կու գան անոր ներկայացուցած տեղեկագիրերը: Ակնբերեւ է նաեւ Սիլահեանի աշխուժ մասնակցութիւնը զանազան օրէնքներու մշակման, մանաւանդ՝ Արդարադատութեան Յանձնաժողովի պարտքերու օրէնքի նախագիծին առնչութեամբ:

Այս խորհրդարանի երրորդ նստաշրջանին, 22 Մարտ 1938ին, խորհրդարանի նախագահ Ֆարէս Խուրի կը հաղորդէ երեսփոխան

Միլլէթպաշեանի մահուան լուրը, կը յիշէ անոր բարեմասնութիւնները իբրեւ ազնիւ եւ յարգարժան անհատականութիւն եւ բարձր գիտակցութեան տէր անձնատրութիւն, ու ներկաները կը հրաւիրէ մէկ վայրկեան յոտնկայս լռութեամբ յարգելու յիշատակը հանգուցեալին:

Նոյն նստաշրջանի 24րդ նիստին, 31 Մայիս 1938ին, Սիւլահեան տեղեկագիր մը կը ներկայացնէ, ուր սուրիական կառավարութիւնը կը նմանցնէ նորաձինի, որ կարիքը ունի խնամքի: Ան իր ելոյթին մէջ կոչ կ'ուղղէ խորհրդարանականներուն՝ հեռու մնալու բանավէճերէ եւ տարակարծութիւններէ, որպէս ազգի ներկայացուցիչներ: Ընդգծելով որ ներկաներուն միակ նպատակը խաղաղութեան հասնիլն է, ան իր գործակիցները կը հրաւիրէ լրջութեան եւ համագործակցութեան: Առ ի պատասխան, նախագահը շնորհակալութիւն կը յայտնէ նման ազնիւ մօտեցումին:

Չորրորդ նստաշրջանի անդրանիկ նիստին, 19 Նոյեմբեր 1938ին, երեսփոխաններ կ'ընտրուին Սիւլահեան, Արտաշէս Պողիկեան¹³ եւ Մովսէս Տէր Գալուստեան:

1938ի խորհրդարանական նստաշրջանին, երբ խորհրդարանի նախագահն էր Ֆարէս Խուրի, Սիւլահեան կ'ընտրուի Ազգային Տնտեսութեան Յանձնաժողովի անդամ, Տէր Գալուստեան՝ Արդարադատութեան եւ Սահմանադրութեան Յանձնաժողովի, Պողիկեան՝ Բողոքագիրերու եւ Ֆինանսական Օրէնքներու Յանձնաժողովներու անդամ:

Խորհրդարանի հինգերորդ նիստին, 10 Ռեկտեմբեր 1938ին, Կրթութեան Հարցերու նախարարին ներկայութեամբ, կ'ընթերցուի Պողիկեանի ներկայացուցած տեղեկագիրը՝ կրթութեան մակարդակի բարելաման ու մանաւանդ անձնական դպրոցներու հոգատարութեան պակասի մասին: Նախարարը կը գնահատէ Պողիկեանի տեսակէտերը եւ պաշտպանած նպատակը:

Պողիկեանի երկրորդ տեղեկագիրը կը վերլուծէ ուսուցիչներու կարգի բարձրացման հարցը: Նկատի ունենալով իրաւագրկուած ուսուցիչներուն պարագաները, Պողիկեան օրինագիծ մը կը ներկայացնէ խորհրդարանին, որ իր կարգին կը փոխանցէ Կրթութեան Յանձնաժողովին: Պէտք է նշել որ Պողիկեան այլ բնագա-ւառներու հարցերով եւս առաջարակներ ներկայացուցած է, ինչպէս՝ Հալէպի բնակչութեան ջուր մատակարարելու, թոշակի ժամա-նակաշրջանի, առեւտուրի եւ անշարժ գոյքերու իրաւական հարցերու շուրջ են., որոնք ընդունուած են եւ համապատասխան օրէնքներով սահմանուած:

Հայ երկու երեսփոխանները կը մասնակցին նաեւ շարք մը օրէնքներու նախագիծերու քուէարկութեան, օրինակ՝ անոնք կողմ կը քուէարկեն երկրի ճանապարհները ցանցաւորելու օրէնքին, Ազգային Տնտեսութեան Նախարարութեան պիտոճէի օրէնքի նախագիծին, ինչպէս նաեւ

գիղատնտեսական հաստոցներու տէրերուն իրաւունքներու եւ ճանապարհներու եւ հորերու վերանորոգման նիւթական վարկի յատկացումներու շուրջ առաջարկուած նախագիծերուն:

Խորհրդարանի ատենագրական արձանագրութիւններէն կը պարզուի, թէ Պօղիկեան եւ միւս հայ երեսփոխանները գործօն մասնակցութիւն կը բերեն զանազան օրինագիծերու մշակումին, Սուրիոյ Հանրապետութեան պիտոճէի քննարկումներուն:

1943ին կը կազմուի նոր խորհրդարանը: 17 Օգոստոս 1943ի ընտրութիւններուն խորհրդարանի անդամ կը դառնան Նազարէթ Եագուպեան¹⁴ (հայ առաքելական, Դամասկոս), Մովսէս Սալաթեան¹⁵ (հայ առաքելական, Հալէպ) Փափագեան (հայ առաքելական, Հալէպ) եւ Ասիուն (հայ կաթողիկէ, Հալէպ): Սուրիոյ խորհրդարանի պատմութեան մէջ առաջին անգամ է որ Սուրիոյ խորհրդարանին մաս կը կազմէ դամասկահայութեան ներկայացուցիչ մը:

14 եւ 29 Օգոստոս 1945ի նիստերուն Եագուպեան կ'ընտրուի Վերաքննիչ Յանձնախումբի եւ Ազգային Տնտեսութեան Յանձնաժողովի անդամ, Սալաթեան եւ Ասիուն՝ Դատական Յանձնախումբի անդամներ: Վերջինս՝ նաեւ Սահմանադրական Յանձնաժողովի նախագահ, Ազգային Պաշտպանութեան Յանձնաժողովի, իսկ Փափագեան՝ Արտաքին Յանձնաժողովի եւ Վերաքննիչ Յանձնաժողովի անդամ:

3 Դեկտեմբեր 1946ին Տիգրան Չրաճեան¹⁶ կ'ընտրուի որպէս Հալէպի երեսփոխան:

31 Մարտ 1947ին, երկամսեայ տետղութեամբ, մինչեւ 31 Մայիս 1947, Սալաթեան կ'ընտրուի Ֆինանսական Օրէնքներու Յանձնաժողովի անդամ, Եագուպեան՝ Վերաքննիչ Յանձնաժողովի, իսկ Փափագեան՝ Արտաքին Յանձնաժողովի:

1947ի Խորհրդարանի նստաշրջանը առաջինն է անկախութենէն ետք, որուն կ'ընտրուին չորս հայ երեսփոխաններ՝ 1.- Ֆրէտ Արսլանեան¹⁷, (հայ առաքելական, Դամասկոս. ան մաս կը կազմէ Արտաքին Հարցերու Յանձնաժողովին, ապա՝ Սահմանադրական Յանձնաժողովին, հուսկ՝ Դատական Յանձնաժողովին), 2.- Ապտալլահ Ֆաթթալ¹⁸ (հայ կաթողիկէ, Հալէպ. ան մաս կը կազմէ Վերաքննիչ Յանձնաժողովին¹⁹, ապա՝ Դատական Յանձնաժողովին), 3.- Լուիս Հընտիէ (հայ կաթողիկէ, Հալէպ. ան մաս կը կազմէ Ֆինանսական Յանձնաժողովին), 4.- Տիգրան Չրաճեան (Հալէպ, չներկայացուած փոքրամասնութիւններ. ան մաս կը կազմէ Ազգային Տնտեսութեան Յանձնաժողովին):

Նոր խորհրդարանի առաջին նիստը կը գումարուի 27 Սեպտեմբեր 1947ին: Երկրի անկախութեան այս հանգրուանին, կը կազմուի Հիմնադիր ժողովը, որ կը գործէ 12 Դեկտեմբեր 1949-2 Դեկտեմբեր 1951 շրջանին եւ կը յառաջացնէ նոր սահմանադրութիւն:

1949ի խորհրդարանի 114 անդամներէն երկուքը հայեր էին՝ Ասիուն եւ Չրաճեան: Վերջինս կ'ընտրուի Սահմանադրական Յանձնաժողովի անդամ: Կարծէք թէ կը կրճատուի հայ երեսփոխաններու թիւը Սուրիոյ խորհրդարանին մէջ: Արդարեւ, այդուհետեւ երկու կամ նուազ հայ դէմքեր կ'ընտրուին եւ անդամ կը դառնան Սուրիոյ խորհրդարանին:

Վեցերորդ նստաշրջանի՝ 1953-54ին հայ երեսփոխան կ'ընտրուի Գրիգոր Էպիղաթեան²⁰ (Հալէպ, ոչ-խսլամ անդամ): Ան անդամ կը դառնայ Ֆինանսական Օրէնքներու Յանձնաժողովին:

1961ին կը կազմուի Հիմնադիր Երեսփոխանական նոր Խոր-հուրդ: Այս նստաշրջանին կը մշակուին շարք մը օրէնքներ՝ քաղաքացիութեան, թոշակի, ազգային զինանշանի, հիմնի եւ...: Հայ երեսփոխաններէն Էպիղաթեան կը դառնայ Կրթութեան Յանձնաժողովի, ապա Վաքֆի Յանձնաժողովի, հուսկ՝ Սահմանադրութեան Ընդհանուր Յանձնաժողովի, իսկ Արամ (Իպրահիմ) Գարա-մանուկեան²¹ Ազգայն Պաշտպանութեան Յանձնաժողովի անդամ:

1971-73 գործած Ժողովուրդի Խորհուրդ նշանակովի խորհուրդին երեսփոխաններ կը նշանակուին Էպիղաթեան եւ Ռուբէն Տիրարեան²²: Անոնք անդամ կը դառնան Դաստիարակչական Յանձնաժողովին:

1973ի եւ 1977ի խորհրդարանի անդամ ընտրուած Հալէպէն Լեւոն Ղազալ²³ կը դառնայ Արտաքին Հարցերու Յանձնաժողովի, ապա նաեւ՝ Դաստիարակչական Յանձնաժողովի անդամ:

1977-94 շրջանին յաջորդական 8 նստաշրջաններու երեսփոխանական խորհուրդին անդամ կ'ընտրուի Էպիղաթեան, որ կ'ընտրուի "Ժողովուրդի այլ կարգեր" ոլորտէն: Ան կը դառնայ Դաստիարակչական Յանձնաժողովի, Սահմանադրական եւ Օրէնսդրութեան Յանձնաժողովներուն անդամ:

1994-2002 շրջանին, յաջորդական 2 նստաշրջանի խորհրդարանի անդամ կ'ընտրուի Սիմոն Իպրահիմ Լիպարեան²⁴ (բանուորներու եւ գիւղացիներու ոլորտէն): Ան անդամ կը դառնայ Ծրագրաւորման եւ Արտադրութեան Յանձնաժողովին:

2003-11՝ դարձեալ երկու նստաշրջանի խորհրդարանի անդամ կը դառնայ Սիւնպուլ Սիւնպուկեան²⁵ ("Ժողովուրդի այլ կարգեր" ո-լորտէն): Ան անդամ կը դառնայ Սահմանադրական եւ Օրէնս-դրութեան Յանձնաժողովին ապա՝ Վերաքննիչ Յանձնաժողովին:

ԱՄՓՈՓՈՒՄ

Կը տեսնենք որ սուրիահայութիւնը Սուրիոյ խորհրդարանին մէջ, սկիզբէն եւեթ ներկայացուած է գրեթէ միշտ: Անցնող շուրջ հարիւր տարիներու Սուրիոյ խորհրդարանի անդամակազմին մէջ հայ ներկայացուցչութեան թիւը տարուեբարձ է հինգի եւ մէկի միջեւ, բացի մէկ նստաշրջանէ: Ուշագրաւ է նաեւ այն որ հայ երեսփոխանները միշտ ալ

մաս կազմած են խորհրդարանական այլեայլ յանձնաժողովներով՝ այդպեսով եւս գործօն եւ ակնառու մասնակցութիւն բերելով երկրին օրէնսդրական զարգացման:

Համառօտ աղիսակ սուրհահայ երեսփոխաններու²⁶

Տարի	Անուններ	Ընդհանուր թիւ
1928	Նիկոլա Ճանճի (Ճանճիկեան), Ֆաթհալլա Ասիուն, Միհրան Բիզանդեան, Մովսէս Տէր Գալուստեան	69
1932-33	Տէր Գալուստեան, Ճանճի, Հանրի Հընտիէ, Հրաչ Փափագեան	
1936-39	Ճանճի, Ասիուն, Հրանդ Սիլահեան, Պետրոս Միլլէթպաշեան, Տէր Գալուստեան	85
1938	Արտաշէս Պօղիկեան	
1943	Նազարէթ Եագուպեան, Մովսէս Սալաթեան, Փափագեան, Ասիուն	121
1946	Տիգրան Չրաճեան	87
1947	Ֆրէտ Արսլանեան, Ապտալլահ Ֆաթթալ, Լուիս Հընտիէ, Տիգրան Չրաճեան	140
1949-51	Ասիուն, Չրաճեան	114
1953-54	Գրիգոր Էպիղաթեան, Չրաճեան	133
1960	Էպիղաթեան	200 (սուրիացի) + 400 (եգիպտացի)
1961-63	Էպիղաթեան, Արամ Գարամանուկեան	172 (Հիմնադիր Ժողով)
1965-66	-----	
1971	Էպիղաթեան, Ռուբէն Տիրարեան	173 (Նշանակովի Ժողով)
1973-77	Լեւոն Ղազալ	197
1977-81	Էպիղաթեան	196
1981-85	Էպիղաթեան	195
1986-90	Էպիղաթեան	194
1990-94	Էպիղաթեան	247
1994-98	Սիմոն Իպրահիմ	250
1998-02	Սիմոն Իպրահիմ	250
2003-07	Սիւնպոյ Սիւնպոյեան	250
2007-11	Սիւնպոյ Սիւնպոյեան	250

- ¹ Սուրիոյ խորհրդարանին մէջ հայ երեսփոխաններու պատմութիւնը ուսումնասիրելու համար մեզի հիմք ծառայած է Սուրիոյ Արաբական Հանրապետութեան խորհրդարանի արխիւը, որ կը պարունակէ խորհրդարանական նիստերու արձանագրութիւնները, պաշտօնական շրջաբերականները, խորհրդարանական ատենագրութիւնները, խորհրդարանին յղած բողոքագիրերը եւ այլ փաստաթուղթեր: Օգտուած ենք նաեւ մեր՝ *Հայ Երեսփոխանները Սուրիոյ Խորհրդարանէն Ներս 1928-2011*, արաբերէն հատորէն, (Դամասկոս, 2011), ինչպէս եւ *Գեղարդ, Սուրիահայ Տարեգիրք, Ե. Գիրքէն* (Հալէպ, 1996): Այս բոլորին միջոցով կարելի կ'ըլլայ լուսաբանել սուրիահայերու մասնակցութիւնը Սուրիոյ քաղաքական կեանքին՝ խորհրդարանի ոլորտին մէջ:
- ² Սուրիոյ օրէնսդիր խորհրդարանը ունեցած է տարբեր անուններ՝ տարբեր ժամանակահատուածներու: Այսպէս, Թշնամի Գրաւեալ Տարածքներու Վարչութեան (1917-20), ինչպէս եւ Սուրիոյ Արաբ Թագաւորութեան շրջաններուն (1920)՝ Սուրիոյ Ազգային Համագումար, Ֆրանսական Հոգատարութեան շրջանին (1922-30)՝ նախ կոչուած է Հիմնադիր Խորհուրդ (1923-25), ապա՝ Հիմնադիր Ժողով (1924-30), Սուրիոյ Հանրապետութեան շրջանին (1930-58)՝ Ներկայացուցիչներու Խորհուրդ (1932-33), Երեսփոխաններու Պալատ (1932-46), Ներկայացուցիչներու Տուն (1947-49), Հիմնադիր Ժողով (1949-51), Երեսփոխաններու Պալատ (1953-58), Արաբական Միացեալ Հանրապետութեան շրջանին (1958-61)՝ Երեսփոխաններու Պալատ (1958-60): Իսկ Սուրիոյ Արաբ Հանրապետութեան շրջանին (1961էն ի վեր)՝ Երեսփոխաններու Պալատ (1961-63), Ազգային Յեղափոխական Խորհուրդ (1965-66), Ժողովրդային Խորհուրդ (1971էն ի վեր) https://en.wikipedia.org/wiki/People%27s_Council_of_Syria (մատչում՝ 1 Նոյեմբեր 2017):
- ³ Նիկոլա Ճանճի Հալէպի մէջ եղած է խմբագիր, շինարարութեան հաշուապահութեան պետական պաշտօնեայ: 1928ին, կը հրաժարի այդ պաշտօնէն եւ ստանալով ձայներու մեծամասնութիւնը, կը դառնայ երեսփոխան՝ Հիմնադիր Խորհուրդին:
- ⁴ Ֆաթիալլա Ասիուն ունեցած է քաղաքական բեղուն գործունէութիւն: Ան անդամ էր ֆրանսական խառն դատարանի կազմին: Իպրահիմ Հանանօ Ասիունի պաշտպանութեան ճառը լսելէ ետք, կ'առաջարկէ որ թեկնածութիւնը ղնէ 1928ի Հիմնադիր Ժողովին: Այսպէս, Ասիուն կը հրաժարի իրաւաբանութենէն եւ կ'անցնի քաղաքական ասպարէզ: Ան, Հիմնադիր Ժողովի անդրանիկ նիստին կ'ընտրուի փոխնախագահ: Ասիուն Հալէպի երեսփոխան կը վերընտրուի 1936ին, 1943ին եւ 1949ին: 1950ին կը դառնայ Հալէպի փաստաբաններու սենտիքայի նախագահ: Ասիուն, իր քաղաքական ասպարէզի տարբեր ժամանակաշրջաններուն եղած է Հանրային Գործոց, Հաղորդակցութեան, Առողջապահութեան եւ Արդիւնաբերութեան նախարար: Ան իր ծառայութիւններուն համար, սուրիական կառավարութեան կողմէ արժանացած է Սուրիական Արժանեաց Շքանշանին, մանաւանդ՝ Եփրատի ջուրը Հալէպ հասցնելու եւ գործածելի դարձնելու ծրագրին համար:

-
- ⁵ Միրհան Բիզանդեանի մասին կան սակաւ տեղեկութիւններ: Ան ծնած է Հալէպ, 1895ին, աւարտած Հալէպի Ֆրանսական Քոլէժը, ապա աշխատած Օսմանեան Դրամատան մէջ, հուսկ՝ զբաղած առեւտրական գործով:
- ⁶ Մովսէս Տէր Գալուստեան ֆրանսական իշխանութեանց ցանկութեամբ կ'ընտրուի երեսփոխան՝ Իսքենտէրունի Սանճաքի հայութիւնը ներկայացնելու համար սուրիական խորհրդարանին մէջ: Աւելի ետք, ան կը հաստատուի Լիբանան, դառնալով նոյնպէս Լիբանանի խորհրդարանի անդամ: Տէր Գալուստեանի մասին ւելի մանրամասն տե՛ս՝ Աշոտ Ներսիսեան, *Մովսէս Տէր Գալուստեան. Կեանքը եւ Գործունէութիւնը*, Ապրող Հերոսներ Մատենաշար Թիւ 5, Երեւան, Էդիթ Պրինտ, 2011:
- ⁷ Յատկանշական է որ Տէր Գալուստեան եւ Հանանօ կը ստանան հաւասար քուէներ՝ 57ական ձայն:
- ⁸ Ա. Համաշխարհային Պատերազմէն անմիջապէս ետք, Ֆրանսական Հոգատար Իշխանութեան տակ անցած աշխարհագրական Սուրիան սկզբնական հանգրուանին բաժնուած էր հինգ շրջաններու՝ Լիբանանի, Դամասկոսի, Հալէպի, Ալաուիթներու եւ Ճեպէլ Տրուզի: Աւելի ետք կը յառաջանան Ալեքսանտրէթի շրջանի պատկանելիութեան բարդութիւնները:
- ⁹ Հընտիէ (Պալապանեան) ծնած է Հալէպ, հայ կաթողիկէ ընտանիքէ: Հընտիէ երեսփոխանական ներկայացուցիչն էր հայ կաթողիկէ համայնքին: Ան 1936ին, կը նշանակուի Ելեմուտքի նախարար:
- ¹⁰ Ազգային գործիչ Հրաչ Փափազեան Հալէպի մէջ ազգային բեղուն կեանք ունեցած է, մաս կազմելով ազգային զանազան մարմիններու: Երեսփոխան ընտրուած է 1932ի եւ 1943ի խորհրդարաններուն:
- ¹¹ Հրանդ Սիլահեան ծնած է Այնթապ: 1939ին, ընտանեօք կը փոխադրուի Ամերիկա, ուր կը մահանայ 1949ին:
- ¹² Պետրոս Միլլէթպաշեանի պապենական մականունն է Միրհանեան: Ծնած է 1891ին, Արաբկիր: Անդամ էր Հալէպի Ազգային Քաղաքական Ժողովին: Անոր խորհրդարանական գործունէութիւնը կարճատեւ կ'ըլլայ, մահուան պատճառով:
- ¹³ 28 Յունիս 1938 թուակիր նախագահական թիւ 580 հրամանագիրով, նախագահ Հաշէմ ալ Աթասի Հայ Առաքելական Համայնքի երեսփոխան կը հաստատէ Պողիկեանը՝ հանգուցեալ Պետրոս Միլլէթպաշեանի փոխարէն: Պողիկեան 1920-36՝ քաղաքական գործունէութիւն ծաւալած է Սուրիոյ ազգային շարժումի ղեկավար Իպրահիմ Հանանոյի հետ, եւ ժողովրդային քուէարկութեամբ երեսփոխան ընտրուած 1937ին: Սուրիական մամուլը զայն անուանած է «Իպրահիմ Հանանոյի աջ բազուկը»: Պողիկեան մահացած է 1954ին:
- ¹⁴ Եագուպեան ծնած է Մարաշ, 1885ին: Պղինձի, փայտի եւ այլ նիւթերու առեւտուրէն ետք, Դամասկոսի մէջ, 1925էն ետք կ'անցնի շինարարական նիւթերու առեւտուրին եւ 1930ին կ'անցնի նաեւ շինարարութեան: Բազմաթիւ մզկիթներ կը կառուցէ Դամասկոսի մէջ, ինչպէս նաեւ Երկրագործութեան Նախարարութեան եւ Արդարադատութեան շէնքերը, Սամիրամիս պանդոկը եւն.:
- ¹⁵ Ծնած է Մարաշ, 1895ին: Պաշտօնավարած է Օսմանեան Ֆինանսներու Նախարարութեան մէջ, ապա զինուորագրուած օսմանեան բանակին: 1922ին

կը հաստատուի Սուրիա, կը պաշտօնավարէ պետական մատակարարման վերահսկումի գրասենեակներուն մէջ: Սալաթեան 1964ին կը ներգաղթէ Խ. Հայաստան, ուր կը մահանայ 1975ին:

¹⁶ Ծնած է 1894ին, տիգրանակերտցի ծնողքէ: Չրաճեան կը պատկանի Հայ Աւետարանական Համայնքին: Մինչեւ խորհրդարանի անդամ ընտրուիլը կը զբաղէր դեղագործութեամբ: Չրաճեան կը մահանայ 1959ին:

¹⁷ Ծնած է Այնթապ, 1912ին: Աւարտած է Դամասկոսի Իրաւաբանական Հիմնարկը: Ան մահացաւ 2001ին Դամասկոս:

¹⁸ Ծնած է Հալէպ, 1890ին: 1913ին կ'աւարտէ Պոլսոյ իրաւաբանական կաճառը: 1919ին կը վերահաստատուի Հալէպ, 1923ին կը նշանակուի Իտլիպի ընդհանուր դատախազ: Կը ստանձնէ դատական բարձր պաշտօններ Դամասկոսի մէջ: Կը մահանայ 1953ին:

¹⁹ Կը դառնայ Յանձնաժողովին նախագահը:

²⁰ Ծնած է 1924ին, օսմանեան նշանաւոր դատաւոր Մատթէոս Էպիղաթեանի ընտանիքին մէջ: Հեռակայ կարգով աւարտած է Պէյրութի Սէն ժոզէֆ Համալսարանի իրաւաբանական Կաճառը 1947ին: 1948ին կը նշանակուի հաշտարար դատաւոր Լաթաքիոյ, Քեսապի եւ Քասաբլի: 1971-73՝ անդամ էր Սուրիոյ նոր սահմանադրութեան մշակման յանձնախումբին: Կը մահանայ Հալէպ, 2010ին:

²¹ Ծնած է Այնթապ, 1910ին: Հիմնադիրներէն է Սուրիոյ յետ-անկախութեան բանակին: 1932ին կը միանայ Դամասկոսի Զինուորական Կաճառին, զոր կ'աւարտէ 1934ին: Կը մահանայ Նիւ Եորք, 1996ին:

²² Ծնած է Արաբկիր, 1928ին: Ընտանեօք տեղափոխուած է Հալէպ 1930ին: Եղած է հայերէն լեզուի ուսուցիչ եւ Հալէպի Կիլիկեան Վարժարանի տնօրէն: Անդամ էր 1971ին Սուրիոյ նոր սահմանադրութիւնը մշակող յանձնախումբին:

²³ Ծնած է Հալէպ, 1915ին, սասուցնի ծնողքէ: Սկզբնական տարիներուն պաշտօնավարած է Երկաթուղագիծի Ընկերութեան մէջ: 1967ին կը նշանակուի Հայրենիքի Պաշտպանութեան Յանձնաժողովի անդամ:

²⁴ Ծնած է Հալէպ, 1947ին: 1974ին շրջանաւարտ կ'ըլլայ Հալէպի Համալսարանի մեքենական ճարտարապետութեան ճիւղէն:

²⁵ Ծնած է Հալէպ, 1965ին: Աւարտած է Հալէպի Համալսարանի Իրաւաբանական Կաճառը:

²⁶ نورا ارسميان, النواب الاردن في المجالس النيابية السورية 1928-2011, ص. 323-326:

The Armenian Members of the Syrian Parliament

(Summary)

Dr. Nora Arissian
noraarissiandeputy@gmail.com

In order to have a better view of Syrian Armenian history, one should look at the careers of Syrian-Armenian MPs and their input to the Syrian parliament.

No such research has been conducted, except for the author's groundbreaking book on the subject. All that exists is bits and pieces of biographic notes published in Armenian newspapers on occasion.

The paper is based on thorough research of the registers and archives of the Syrian parliament from 1928 to 2011 and the above-mentioned book.

Alongside biographic highlights, the paper discusses the contribution of the Syrian Armenian MPs to diverse parliamentary committees and their stance concerning Syrian socio-economic and cultural affairs and policies. These are brought to life from the speeches and letters of the Armenian MPs.